չեւ Սրուանձտեանց, Հայկունի եւ այլք, մեծ քանակութեամբ նիւթերէն պաշար հաւաքուած է. իսկ Պ. Լալայեան արդէն ֆոլքլորական գործունէութիւնը լուրջ գիտական հողի վրայ դրաւ, տարիներէ ի վեր ան այդ դերը կը կատարէ իր հմուտ վարպետի լիալիր գիտակցութեամբ եւ առաքելի անձնազոհ եռանդով։ Ներհուն բանասէրներ, Մ. Աբեղեան, Ս. Կանայեանց սկսած են արդէն մեր ժողովրդական աւանդութեանց, ժողովրդական դիւցազնավէպերու եւ մեր հին պատմութեան միջեւ գըտնուած թաքուն աղերսը փնտռել եւ երեւան հանել։ Վանէն կը սկսի շողալ նոր Սրուանձտեանց մը, բազմաշնչ ու կրակոտ Չիթունին։ Այդ ճամբուն մէջ, որ լաւ բացուած է՝ հետեւողներու համար, եւ ուր վարժ գործիչներ կ'աշխատին մինչեւ այսօր եռանդով ու գիտակցութեամբ, շատ բան կայ դեռ ընելու։

* * *

Ահա՛ մտաւոր գործունէութեան ընդհանուր ծրագիր մը, որ նոյն ատեն չատ բեղուն ծրագիր մըն ալ է գերազանցապէս եւ իրապէս «ազգասիրական» գործունէութեան։ Ասոր իրենց աջակցութիւնը կարող են բերել մեր ժողովրդին բոլոր տարրերը, իւրաքանչիւրն իր միջոցներովն ու չափովը, թէ՛ հոգեւորականը թէ՛ անհաւատը, թէ՛ յեղափոխականը թէ՛ պահպանողականը, թէ՛ հարուստը, թէ՛ աղքատը, որովհետեւ ասիկա ոչ միայն ընդհանուր գիտական տեսակէտով կարեւորութիւն ունեցող գործ մըն է, այլ մեզ համար՝ մեր ամենաէական, ամենաբարձր շահերուն, մեր «պատուոյն» հետ կապ ունեցող հարց մըն է։ Ի՛նչ հոյակապ, անսահման, յուռթի գործունէութիւն, մանաւանդ՝ երիտասարդ մըտքերու համար. ի՛նչքան օգտակար ու գեղեցիկ կերպով այդտեղ կարող են ասոնք իրենց նոր թաթուիչ ուժերը գործածել՝ փոխանակ զանոնք յուսալքուած վատնելու՝ ինչպէս սովորական երեւոյթ մը սկսաւ դառնալ՝ «փոլիթիքէն»ի կամ մեր բառով՝ «ազգայինէն»ի յիմար ու ամուլ փառամոլութիւններու, կռուազանութիւններու մէջ։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Մինչ ՀԱՅԵՐԷՆ լեզուն և հայ գրական, ճարտարապետական, երաժշտական արտադրութիւններն բազում քննութեանց առարկայ եղած են կէս դարէ ի վեր թէ՛ հայ և թէ՛ օտար ուսումնասէրներու կողմէն, տակաւին հայկական հարսանիքը, մին հայ ցեղին հոյակապ հաստատութիւններէն, կը մնայ անխուզարկեալ և անծանօթ։ Հայկական եկեղեցիին պէս՝ հայկական հարսնիքն ալ ցեղին հոգւոյն շատ բարդ և շատ հաւատարիմ մէկ պատկերն է։ Ու հարսանիքը աւելի բարդ ու աւելի ճշգրիտ պատկերն է հայ հոգւոյն, վասն զի իր մէջ կը միացնէ հոգեւորն ու մարմնաւորը, կրօնականն ու աշխարհայինը։ Ոչ միայն հայ լեզուն և բանաստեղծական ու երաժշտական արուեստը իրենց պարզ գեղեցկութիւնովը ի հանդէս կու գան հարսանեաց մէջ, այլ և ցեղին բարոյական ըղձանքը, հոգեկան լրջութիւնն ու ընտանեկան իտէալը։ Քրիստոնէական ու հայկական տարրերը հոն զիրար թափանցած՝ ներդաշնակ ու գեղեցիկ միութիւն մը կազմած են։ Ամբողջութիւնը այնքան խորապէս հայկական է որ ոչ ոք երբեք կը մտածէ վերլուծել զայն իր տարրերուն։ Ցաներգեցը, տիրացուն, շարական ու աղօթքը խառնուած են սիրոյ երգերուն, գինիին, պարին, խնջոյքին և երաժշտական գործիներուն հետ։ Երկին ու երկիր գիրկընդխառն են հայ հարսանիքին մէջ։ Եկեղեցին ընտանիքի խորհրդաւոր ծոցէն առած է իր վեհագոյն խորհուրդը, և ընտանիքն ալ իր հարսանեաց մէջ եկեղեցիէն կ'առնէ իր հոգեկան վսեմութիւնը։ Եկեղեցին կ'երգէ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայսենեցար.
Հսկիւրն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի.
Ծնաւ նոր արքայ ի Բեթղէհէմ քաղաքի։

Այսինքն, Աստուած մարդ եղած է որպէս զի մարդն Աստուած ըլլայ։ Այդ է քրիստոնէական կրօնին ծուծը։ Իսկ հայկական հարսանիքին խորհուրդն այս է թէ տղան նորէն աշխարհ կը մտնէ, կը վերածնի, կը պսակուի, որպէս զի „թագաւոր" ըլլայ, գլուխը փոքրիկ պետութեան մը, որուն քաղաքացիներն ինք

digitised by A.R.A.R.@

պիտի ստեղծէ, ինք պիտի կողմակերպէ ու վարէ, և ընէ զայն իտէալ պետութիւն մը — սիրոյ, գութի, հաւասարութեան, անձնուիրութեան, երջանկութեան թագաւորութիւնը, ըստ օրինակի երկնից թագաւորութեան։

Այս ըմբռնումով է որ փեսան „թագաւոր" կը կոչուի, մէջքը „սուր" կը կապէ, հարսին հետ „կը պսակուի" որ թագուհին եղած կ'ըլլայ։ „Թագաւորը" հարսանեաց բոլոր օրերուն մէջ եզական պատիւներու կ'արժանանայ. ան միշտ ուրիշներէն բարձր կը նստի. ձիով կ'երթայ եկեղեցի՝ պսակուելու. միայն անոր գլխի խմելուն առիթով է որ մեծագոյն աղմուկ կը հանեն հարսնեւորը։ Ամէն բան հաշուեալ է երիտասարդին վրայ խորապէս տպաւորելու Հարսանեաց կամ ամուսնութեան խորհուրդը թէ ինքը „մարդ է եղած", „քաղաքացի" մը, „պետ մը", թէ „աստիճան" մը ստացած է, տեսակ մը „թագաւոր" օծուած է, և թէ ահա կը թեւակոխէ կեանքի նոր ասպարէզ մը ուր իր հոգւոյն ամենալաւ բնազդներն և բարձրագոյն կարելիութիւններն արդիւնաւորման կը կոչուին։

Մինչ փեսային այս պատիւները կը շռայլեն զինքը իր նոր կացութեան բարձրութեանը գիտակից ընելու համար, միւս կողմէն հարսին հետ կը վարուին իբրեւ Հարսանեաց կեդրոնին և հոգիին հետ։ Իրք, Անգլօ-Սաքսոն wedding (հարսանիք) խոստում կամ ուխտ կը նշանակէ. թրքական „տիկուն"ը կապ կամ զօդում ըսել է, իսկ մեր նախնիք „հարսանիք" բառը շինած են „հարս" արմատէն։ Հարսանեաց բոլոր իմաստը, խնդիրը „հարս" առնելուն մէջ տեսած են. և արդարև հարս բառը նոյն իսկ հարց բառին մէկ եղանակաւորումն է։ Մեր լեզուին ամենէն ոսկեզօծ բառն է հարսը և մեր երկակայութեան լուսը կը բերէ ամենէն գողտրիկ, սիրուն, նազելիմ, աղուոր, պաշտելի էակը, որ զգեստաւորուած է ամենէն գեղեցիկ և թանկագին հանդերձներով, և ամենէն փափկանկատ ու գորովագին խնամքներով շրջապատուած է։ Հարսանեաց բոլոր երգերն հարսին վրայով են, բաց ի մէկէն որ „թագաւոր"ին նուիրուած է։

***

Իմ այս ուսումնասիրութեան մէջ պիտի նկարագրեմ Հայկական Հարսանիքը ինչպէս տեսած եմ ես զայն իմ բնիկ քաղաքին մէջ, ՅԱԿՆ։ Այլեւայլ գաւառացիներէ հարցնելով իմացած եմ թէ մինչ շատ տեղեր Հարսանեաց ինչ ինչ արարքներ նման են Ակնականին, և կարգ մը բաներու մէջ ալ ուրիշ ցեղերու մէջ տեսնուած են, Ակնայ Հարսանիքը, իր ամբողջութեան մէջ, եզական է, և վաղնջական ազնուականութեան գծերը բոլորովին պահպանած է։ Նախարարական կամ իշխանազուն ընտանիքներ Ակնայ գաղութը հիմնած և հոն՝ ուրիշ աւանդութեանց հետ, բերած են նաև Հայկական Հարսանիքը իր բարձրագոյն և բնիկ տարազովը։

Հոս ոչ միայն պիտի նկարագրեմ Հայկական տիպար Հարսանիքը, որպէս գտած եմ զայն ՅԱԿՆ, այլ և պիտի փորձեմ այդ տիպարը մաքրագործուած ներկայացնել։ Ինչպէս որ հին դարուց նկարչական հրաշակերտի մը վրայ խակ վարպետներ վերջէն իրենց վրձինը կը փորձեն երբեմն՝ և կը խաթարեն չափով մը անոր գեղազանց աղուորութիւնը, այնպէս ալ մեր հարսանեկան երգերուն վրայ նորահնար և տգեղ յաւելուածներ եղած են որք բնիկ հայ բանաստեղծութեան նկարագիրը բնաւ չունին։ Ասոնք իբրև համբակի գծեր պատկերէն կը սրբեմ կը հանեմ։

Թեթեւ փոփոխութիւններ կ'ընեմ նաև քերականական տեսակէտէ. զոր օրինակ, փոխանակ ըսելու, ինչպէս ՅԱԿՆ կ'ըսուի. „Եալի կոյնէ', թագաւոր աղբա'ր, ես քեզ գովիմ գլխուս ի վար." ես պիտի գրեմ հոս. „Եալի կայնէ', թագաւոր աղբար, ես քեզ գովեմ գլխուդ ի վար։" Այսքան մը ուղղագրական փոփոխութիւն ընել հարկ կը սեպեմ, քանի որ իմ նպատակս չէ Ակնայ գաւառաբարբառին ճշգրիտ օրինակները տալ, այլ Հարսանիքը նկարագրել։

***

Այժմ տեսնենք թէ ինչպէս կ'ընեն Հայկական Հարսանիքը։

Նախ յիշենք թէ Նշանուքը որ բուն Հարսանիքն ամիսներ առաջ կ'ըլլայ սովորաբար, ունի իր հետաքրքրական հանգամանքները։ Թարեկամաց միջոցաւ աղջկան ծնողաց հաւանութեան ծանօթանալէ վերջն է որ տղուն կողմէն ծնողքը և մէկ-երկու ազգականք կ'երթան „նը-

digitised by A.R.A.R.@

շան"ը տալու աղջկան, կամ գնէ „նշանելու" իրենց տղուն։ Ոսկեդրամ է նշանը զոր աղջկան կ'ընծայեն, և որով նէ իրենց „հարսնցուն" կ'ըլլայ։ Ժամանակ մը վերջը „աղջիկտես" կ'երթան տղուն կողմէն աւելի մեծ բազմութեամբ երբ այցելուաց իւրաքանչիւրը ոսկեդրամ մը, մը, մեծ կամ պզտիկ, կը նուիրէ հարսնցուին։ Աղջկան կողմէն ալ տղուն կողմը „փեսատես" կ'երթան և կը պատուասիրուին։

Նշանուելէն օրէն մինչև ամուսնութեան օրը կրնայ ամիսներ կամ տարի անցնիլ, սակայն տղան, աւելորդ է ըսել, իր նշանածին հետ ո՛չ կրնայ տեսակցիլ և ո՛չ պտրտիլ. միայն կէսգաղտագողի կ'երթայ վայրկենական տեսութեան, երբ հարսնցուին հայրը բացակայ է անէն, և կիներ միայն ներկայ են։ Տղան շատ ուրախ կ'ըլլայ իր նշանածին երեսը վայրկեան մը տեսնելու։ Այսպէս էր մինչև 25-30 տարի առաջ։ Անկէ ի վեր բարեփոխումներ և չարափոխումներ կրնան եղած ըլլալ։

Նշանուելէն մինչև հարսանեաց օրը աղջկան կողմը շատ զբաղած կ'ըլլայ օժիտի պատրաստութեամբ։ Երբէն ուրեմն ձեռք զգեստ օժիտ կուտան աղջկան ծնողքը՝ ըստ կարողութեան։ Շամի ու Հալէպի պէսպէս ու գունագեղ մետաքսեայ թանկ պարեգօտներ, և ձիւնափայլ կամ գեղնորակ մուշտակներ, երկար և կարճ (կոճիկ քիւրք), շալ գօտիներ, մետաքսեայ շապիկներ, ևն. ևն. կը բաղկացնեն օժիտը։ Այդ բոլոր ժամանակամիջոցին՝ հարսանեկան մթնոլորտ մը կը տիրէ աղջկան շուրջ, բայց ամենէն շատ մայրն է սրտայոյզ և ծանրազբաղ։ Հայ մօր մը կեանքին ամենէն կարևոր դէպքը իր աղջկան ամուսնութիւնն է, և իրաք պատասխանատուութեան ծանրութիւնը կը հաւասարի նէրա անպատում ուրախութեան։

Հարսանիքէն ուրեմն օր առաջ տղուն ծնողքը կը ծանուցանեն աղջկան ծնողաց՝ հարսանեաց օրը. „իմաց կ'անեն" Ակնայ բարբառով։

Հարսանիքը սովորաբար երեք օր կը տեւէ, թէև մեծատունք և իշխանք երբեմն շաբաթ մը կամ աւելի կը շարունակեն։

Հարսանեաց առաջին օրը

Հարսանեաց առաջին օրը զգեստաւորման օր է, երկրորդ օրը՝ պսակի, երրորդ օրը ուրախութեան և պարի։

Ընդհանրապէս առաջին օրը կիրակի օրն է։ Շաբաթ երեկոյ փեսան և երիտասարդ բարեկամներ բաղնիք կ'երթան։ Կիրակի առաւօտ, կէս օրէն առաջ, փեսան կը հագցնեն։ Փեսային այս զգեստաւորումը լուրջ արարողութիւն է։ Ձեռք մը նոր զգեստ շինուած պատրաստուած է, „հալաւը" զոր քահանան կ'օրհնէ և տիրացուներ շարականներ կ'երգեն։ Այնուհետեւ հանդիսաւոր կերպով տղուն նոր զգեստները կը հագցնեն, աղջկան կողմէն ևս քանի մը հոգի հրաւիրուած ըլլալով այս հանդէսին։

Կնքահայրը և կնքամայրը շատ նուիրական անձնաւորութիւններ են։ Կնքահօր անկ է փեսային զգեստներն հագցնել, ինչպէս կնքամօրն՝ աղջկան զգեստներն զգեցնել։

Կնքահայրը հետզհետէ զգեստուց իւրաքանչիւրը զատ զատ առնելով կը պտրտցնէ երեք անգամ տղուն շուրջը՝ ըսելով բարձրաձայն. „Ատուած շնորհաւո՛ր անէ. Ատուած շնորհաւո՛ր անէ. շնորհաւորն Ատուա՛ծ անէ։" Այս „շնորհաւորն Ատուա՛ծ անէ"ն բոլոր հանդիսականք կ'ըսեն կնքահօր հետ միաձայն։

Այս մաղթանքները կը կրկնուին անձնիւր կտորի վրայ, և այս կերպով բաճկոնը, պարեգօտը, գօտին, թիկնոցը կը հագցնեն։ Ամենէն վերջը գլխարկը գլուխը կը դնեն. այս ալ տղուն հօրը վերապահուած է, որ կը համբուրէ միանգամայն իր որդւոյն ճակատը և գրպանը դրամ կը լեցնէ։

Այս հանդիսին մէջ սովորաբար դրամական նուէրներ կը տրուին քաղաքին կրթական կամ բարեսիրական հաստատութեանց համար։

Փեսին զգեստաւորումը երբ կ'աւարտի, հետեւեալ երգը կ'երգեն ի գովեստ անոր

(1). Եկի կայնէ, թագւոր աղբա՛ր.
Ես ելեզ գովեմ գլխուդ ի վար,
Առաջ ես ու հաստակդ ըսեմ,
Որ չիմարի ծառ կը նմանի.
Անկէց ես ու երեսն ըսեմ,
Որ լուսընկի կալ կը նմանի.
Անկէց ես ու մազերն ըսեմ,
Որ առիւծի բաճ կը նմանի.
(Որ սրումայի թել կը նմանի.)
Անկէց ես ու աչերն ըսեմ,
Որ շահէնի աչ կը նմանի։

Հոս կ'արժէ ի մէջ բերել յոյժ գեղեցիկ գովեստ մը Ակնայ բանաստեղծութիւններէն որ

digitised by A.R.A.R.@

փեսային վրայ ըսուած է, թէև չեն երգեր զայն այժմ։

(2). Ան բարձր լեռնէն ի վար
Մեզի բարկ արեւ մին է ցաթեր.
Ամէնուն երդիին ի վար,
Մեզի դուռն ինեռս է ճառագեր։
Ամէնդ ի վրայ եկէք, -
Թագուորին կապան կարեցէք.
Լուսընկան ասատ արէք,
Արեգակն երես ձեւեցէք.
Ան մանր ու խոշոր ասպեր
Թեւերուն կոնակ կարեցէք։

Մարդկային երեւակայութիւնը քան զայս աւելի փառաշեղ զգեստ չէ կարող ստեղծել։ Երկնաւոր թագաւորին հանդերձն է զոր կ'ուզեն հագցնել իրենց „թագաւոր"ին։

Աղջկան զգեստաւորումը աւելի կարեւոր և երկար արարուած մը կը կացուցանէ։ Կէս օրէն վերջ՝ տղուն կողմէն խնամիներու երկսեռ բազմութիւն մը, փեսացուն ալ միասին, կ'երթան աղջկան տունը։ Միասին կը տանին նաև հարսնցուին ձեռք մը զգեստը որ տղուն կողմէն ընծայ է։ Քահանան հարսնցուին հալաւն ալ կ'օրհնէ։ Բայց զգեստաւորման արարողութիւնը կիներու սրահին մէջ տեղի կ'ունենայ, մինչ այր մարդիկ զատ սրահի մէջ կը հիւրասիրուին։

Առանձին սենեակի մը մէջ կը հագցնեն հարսնցուին ընծայուած լաթերը, բաց ի գլուխ խարկէն և գօտէն, և կ'առաջնորդեն զնէ խնամիներուն սրահը։ Այն պահուն երբ նէ կ'երևայ սեամին վրայ, խնամիները կ'երգեն հետեւեալը.

(3) Աղջիկ, ու ճաղանդ ալ (կարմիր) է,
Ալուկ փէշերդ վեր ծալէ.
Քալէ ու մանտրտիկ քալէ,
Ու ապուկ պօյիկդ երեւայ։

Այս երգը վերջին ժամանակաց գործ է, զի նոյնայանգ է, և յանգերն արուեստակեալ են (ալ է, ծալէ, քալէ։)

Ինկ հայ քերթուածի շնորհքէն զուրկ է հետեւեալ կտորը։

(4) Առաւօտուն կ'ելլես, երեսդ լուա.
Էպրեռսմ մազերդ դրեր ես ոիինա.
Աս ապուռ երեսդդ պագ մի ռուր ճրլա։

Առաւօտուն երեսը լուալու աւելորդ խրատը կու տայ հոս որպէս զի „հինա" (կարմիր ներկող շաղախ մըն է) բառին հետ յանգ մը կազմած ըլլայ։ իսկ երրորդ տողը, շատ համարձակ և շատ յանկարծական, երբէք չի յարմարիր Ակնայ հին ծանր բարքերուն։

Նոյնքան նորելուկ և անշնորհ է հետեւեալը.

(5) Առաւօտուն կ'ելլես արեւ կը ցաթէ,
Բերանդ ոբ կը բանաս մեզր կը կաթէ.
Եկուր ճսոիմ անուռ անուռ խորաթէ։

„Առաւօտուն կ'ելլես, արև կը ցաթէ" խօսքը ո՛և է կապ չունի „բերանդ կը բանաս՝ մեզր կը կաթէ" խօսքին հետ, բայց խակ յորինիչը ուզած է „ցաթէ, կաթէ, խորաթէ" յանգերը ձեւացնել։

Աւելի լաւ է սա կտորը.

(6) Ադուռր մին է կայներ դրանը էկսը -
Շարեր ոսկի Ս'ուրծաթ՝ ձգեր երեսը.
Հազար ոսկի կ'ուրժէ, ադուռ՝ր ինա տեսը։

(7) Վերէն ի վար կուգաս, բարակ ձայնով ես.
Հեսս չես խորաթեր, վախեմ էենով ես.
Ադուռրին ցեղէն ես, այա (միտ) խռով ես։
(8) Նազ արէ, նազ արէ, նազդ վերցընեմ.
Այա էեգի նուռ ու ռարար կերցընեմ.
Հազցընեմ կապցընեմ, մարոնցդ խրկեմ։

Այս երգերուն երգուած ժամանակը աղջիկը նստած կ'ըլլայ իր մօր կամ անոր փոխանորդին (մօրքրոջ, հօրքրոջ) առջև, իբր անոր ապաստանած։ Երգուած այլ և այլ երգերուն մէջ ընիկ ու հին գեղեցիկ երգը հետեւեալն է.

(9) Ոլրրեցար, բոլրրեցար,
Ադուռր, ճամբան մոլրրեցար.
Մոլրրեցար ու նեռս եկար։

Այս կտորին մէջ ևս յանգերը նման են, բայց փնտռուած յանգեր չեն, այլ ինքնեկ։ Ընիկ հայկական ձևը անմիջապէս աչքի կը զարնէ բառերուն կրկնութեանն ու խմաստին բնական փթթումին մէջ. առաջին տողը „ոլրրեցար, բոլրրեցար" ադուռր նկարագիր մ'է որ կ'ակնարկէ հարսին քիչ կամ շատ հեռուէն եկած ըլլալուն (երբեմն ուրիշ գիւղէ մը կամ քաղաքէ մը)։ Երկրորդ տողը „Ադուռ՝ր, ճամբան մոլրրեցար"ը կը կրկնէ առաջին տողին իմաստը, զայն ընդլայնելով։ Երրորդ տողը կը կրկնէ երկրորդին միտքը, նոյնպէս զայն ընդլայնելով և բնական եզրակացութեանը հասցնելով „Մոլրրեցար ու նեռս եկար։" Այդ երեք տողով փոքրիկ քերթուածը անարատ ու անգին գոհար մըն է հայկական բանաստեղծութեան։

Կ'երգեն նաև հետեւեալ կտորը, ուր նմանապէս կը տեսնենք բառերուն և իմաստներուն

digitised by A.R.A.R.@

բնական ու վայելուչ խաղացքը, առանց ոևէ արուեստականութեան.

(10) Աղուո՛ր, ինչ ո՞ր մայր է բերեր.
Ան թուխ այուի մայրն է բերեր.
Մայրն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի համար.
Քեզ տի տանինք մեզի համար։
Հա՛յ իմ հա՛յ, անճրման աղուոր,
Չի կայ ինչ նման աղուոր։

„Մենք ենք եկեր քեզի համար, քեզ տի տանինք մեզի համար"ը երգելէն վերջ կը կատարեն հարսն առնելու արարողութիւնը որ հարսանեաց ամենէն տարօրինակ արարուածն է, բայց չէ առանց նշանակութեան։ Խնամի տիկիններէն մէկը կ'ելլէ և մօտենալով հարսնցուին, անոր երկու թեւերէն կը բռնէ և մօրը գրկէն առնել կը փորձէ. բայց չի յաջողիր։ Երկրորդ, երրորդ, երբեմն մինչև վեցերորդ մը նոյն փորձը կու գան կատարել, և կը վրիպին։ Այն ատեն սա յայտարարութիւնը կ'ընէ վերջին փորձողը — „Հարսը ծանր է նստեր, ինքամայրը կ'ուզէ։" Ու ինքամայրը. խնամիներուն էն նըւիրականը, էն անգիմադրելին, կու գայ և երբ աղջիկն առնել կը փորձէ, ահա նէ կ'ելլէ ոտքի յուզիկ և կը յանձնուի։ Ինքամայրը կ'առաջնորդէ զնէ սենեակին կեդրոնը, ուր բարձեր իրարու վրայ դնելով հարսը վրան կը նստեցնեն և ինքամայրը անոր գօտին կը կապէ և գլխարկը գլուխը կը դնէ։ Այժմ լրացած է հարսին զգեստաւորումը. անոր բոլոր հագածները կեսրոնց կողմէն ղրկուած զգեստներն են. հարսը պատրաստած են ուրեմն իրենց տունը տանելու, ուստի ցնծագին կը հնչեցնեն իրենց յաղթանակի երգը, որ է.

(11) Եկո՛ւր, աղուո՛ր աղջիկ, ճարս եղար մեզի.
Եախուք, գմրուք, անգին էար մեզի։
Առաւօտուն կ'ելլես պաղ պաղ հովերուն.
Սոխակ խորան կազմեր վարդի բոյսերուն.
Ուր վարդէն կ'առնէ, ուր հովերուն.
(Անուշ Սաթենիկ է այն վարդին անուն։)

Այս նկարագրութիւնէն հեշտ է տեսնել թէ խնամիներուն այս այցելութեան նպատակը հարսը տեսնել չէ, այլ զայն առնել, զայն իրենցը հռչակել։ Ու առնելու արարուածը թատերական տեսարան մը կ'արժէ։ Աղջիկը իբրև մատաղ տունկ մը իր ընտանեկան պարտէզէն խլելով, կ'ուզեն տանիլ տնկել իրենց ընտանիքին ծոցը. քանի մը տիկիններ կը փորձեն զայն քաշել հանել մայրական գրկէն, չեն յաջողիր. վերջապէս ինքամօր ձեռքերը կը տանին յաղթանակը։ Բռնութեան այս մեղմ կիրարկութիւնը անշուշտ նուազեալ արձագանգն է բարբարոս դարերու սովորութեան՝ երբ աղջիկները բռնի կը յափշտակէին կը տանէին ի հարսնութիւն։ Այս յափշտակութեան գաղափարը ուրիշ տեսարանի մը մէջ ալ կը վերերեւի, երբ հետեւեալ առաուն, շատ կանուխ, տղուն կողմէն խումբ մը երիտասարդներ, ձի մը առած, կ'երթան աղջկան տունը, զինքը եկեղեցի տանելու համար. սակայն տան դուռը չեն բանար աղջկան ծնողք, և խումբը երբեմն ժամ մը կամ աւելի կ'աղաչէ որ ներս ընդունուի, կամ տանիքէն վար իջնելու հնարը կը գտնէ։ Այս ամբողջ կատակերգութիւնը վաղնջական բալքերու և լուրջ մյոցանքի յիշատակն է։ Երկուստեք կը վայելեն կեղծ կռիւը այս պարագային մէջ, և ուրախ են. բայց աղջիկը իր մօր գրկէն առնելու նախորդ արարուածը շատ „փաթէթիք" և սրտայոյզ է։ Երբ տիկինները կ'երգեն „Աղուոր քեզ որ մայրն է բերեր. Ան թուխ-աչուի մայրն է բերեր. Մայրն է բերեր մեզի համար, քեզ տի տանինք մեզի համար," թէ՝ մայրն ու թէ՝ աղջիկը դառնապէս կ'արտասուեն, ինչպէս ուրիշ մերձաւոր արենակիցներ։ Մայրը շատ երջանիկ է իր սրտահատոր դուստրը ամուսնացնելուն համար, սակայն բաժանումը՝ թէ և երջանիկ բաժանում, իրեն համար ծանր է։ Հոն տրամախոհութիւնը գործ չունի. զգացումներն են տիրապետող։ Բայց նոյն իսկ շատ զարգացած և ուսեալ մայր մը, եթէ այդ արարուածով իր աղջիկն բաժնուէր, և լսէր այդ սրտայոյզ երգը, հաւանօրէն չպիտի կրնար չարտասուել։

Հարսին զգեստաւորումէն վերջ երգուած երգերուն մէկը կ'ակնարկէ հնոր քանի մը ժամ յետոյ մօրը տունէն մեկնումին դէպ ի կեսրոնց տունը.

(12) Ման եկուր, աղուո՛ր, ման եկուր.
Դէպ ի մեր տունն ի դան եկուր.
Հէյ (երբէմ) չես ի զար մերը բանէ,
Թուխ աչուիդ հոգիս կու հանէ։
Հայ իմ հայ անճրման աղուոր, եւ այլն։

Ցանուն փեսային կ'երգեն սա տողերը.

Առաւօտուն լուսուն աղուոր մի տեսայ,

digitised by A.R.A.R.@

Գոնութիւն Աստուծոյ , եար եղաւ ինձի .
Եախութ, զմրուտ, անգին եար եղաւ ինձի:
Եկուր , ադուտար ադիկ, եւն.:

Վերջապէս տիկին մը սօղ կ'երգէ հետեւեալ անտուէին , (քաշ և անուշ եղանակաւ մը) որ գովեստ և խրատ է առ Հարսն.

(13) Ա՛յ իմ հարսի դստրի՛կ .
Ծոցդ այգի , ծառդ արմաւենի .
Արմաւը հու ծառդ կը լինի ,
Պիւլպիւլը հու ճեղդ կը քառի :
Քու ծառն ու ճեղը ոսկի ,
Քու տերեւը վարդ կը նմանի :
Ես քու ծոցուն տէր պիտի ,
Ճեղերուդ արմաւ քաղէի :
Հարսնուկ , էհ խրատ մի տամ .
Ականոնդ իս արէ .
(Թէ) որ գան ու հազար ըսեն ,
Հազարէն մէկ խօսք մի խօսէ ,
Ան ալ » չգիտեմ » ըսէ ,
Հազար չարէն խալրսէ :

Խնամիները ամէն տեսակ մեծարանք կը մեծարուին , և վերջապէս ընթրիքը աղջկան հօրը տունը ընելէն վերջը կը մեկնին , Հարսը հոն թողելով , որպէս զի քանի մը ժամ եարը , գիշերը , ձի և հրաւիրակներ ղրկեն զինքը եկեղեցի՝ պսակման տանելու :

Այսպէս կը վերջանայ Հարսանեաց առաջին օրը :

Հարսանեաց երկրորդ օրը

Արշալոյսէն երկու կամ երեք ժամ առաջ կը շարժին տղուն կողմէն խումբ մը երիտասարդներ — տղուն եղբայրները , քուզէնները , եւն. — երթալ Հարսը եկեղեցի տանելու Համար : Հարսը , ինչպէս փեսան , անվրէպ ձի հեծած պէտք է երթան պսակուելու : Ինչպէս վերև ակնարկեցի , Հարանաղբարներու խումբը ձի մը առած կ'երթայ աղջկան տունը և կատակերգակ դիմադրութիւններու յաղթելով իր մուտքը կը գործէ , կը մեծարուի , և աղջիկը ձի հեծցուցած կը դիմէ եկեղեցի : Աղջկան եղբայրներն և քանի մը մերձաւոր ազգականք , ինչպէս նաև Հարանքոյր կոչուած մատաղ տիկին մը խումբին միացած կ'երթան եկեղեցի : Փեսան ևս ուրիշ խումբի մը հետ հոն Հասած կ'ըլլայ , Երէցը պսակի արարողութիւնը կը կատարէ , Փեսային սուրը պատեանէն Հանելով սուրն ու պատեանը իրար խաչաձեւող դիրքի մէջ կը դնէ կնքահայրը փեսային ու Հարսին գլուխներուն վրայ պսակման պահուն : Հարսն ու փեսան ձիերը կը հեծնեն և երկու խումբերը միացած , երգելով՝ առաջ փառաջ կը դիմեն փեսային տունը : „Առաւօտ լուսուն"ը գլխաւոր երգն է և շատ պատշաճ է ժամուն , զի տուն կը Հասնին արշալուսին :

Հարսանեաց ամենէն ուրախ վայրկեանը Հասած է : Հարսնեւորները տանը առջևի բակը , բացօդեայ , կանգ կ'առնեն , և Հարսն ու փեսան ձիերուն վրայ հեծած կը մնան բաւական ատեն , երբ տղուն կողմի ազգականներն և նուագածուները կ'երգեն փոխն ի փոխ Հարսին ուղղեալ „բարեաւ եկար"ի մաղթանքը : Տողերը կարճ են , բայց չորս անգամ կը կրկնուին , սապէս .

Նուագածուն թէ՛ կը նուագէ և թէ՛ կ'երգէ սօղ .

(14) Բարի լո՛յս , ադուո՛ր , բարի լո՛յս ,
Բարի լո՛յս , ադուո՛ր , բարի լո՛յս :

և կին երգիչները կը կրկնեն նոյնը , իբրև արձագանգ .

Բարի լո՛յս , ադուո՛ր , բարի լո՛յս ,
Բարի լո՛յս , ադուո՛ր , բարի լո՛յս :

Նոյն կերպով յաջորդ տողերը .

Բարի լուսուն բարին վրադ .
Որ ցարէ արեւն ի վրադ :
Բարով եկար , դուն բարի արեւ ,
Ցարեցիր մեր տանն ի վերեւ :
Հայ իմ հայ , անմրմանն ադուոր ,
Չի կայ Հեգի նման ադուոր :

Այս նուագածուները տեսակ մը ջութակ (քէմէնչէ) և դափ (դէֆ) կը դարնեն , իսկ կիները՝ դափ : Այս արարուածը էնս ժամ կամ աւելի կը տեւէ : Անոր գեղեցկութիւնը աննկարագրելի է : Հայկական Հարսանեաց ամենէն սխրալի , ամենէն փառաւոր , ամենէն ուրախ դրուագն է , և երգը՝ Հարսանեկան երգերուն է՝ ադուորն է որ կը հնչեցնեն հոն ցնծութեան շեշտերով : Բայց արարուածին ցնծագին Հանգամանքէն աւելի բարձր Հոգի մը , ազնուական բան մը , սիրոյ և յարգանքի յուզում մը կայ հոն նորեկ Հարսին ուղղեալ :

Աղջիկը իր նոր ընդգրկած ընտանիքին սեմին վրայ առաջին անգամ կը կոխէ , նոր կեանք մը կը սկսի նոր միջավայրէ մը բոլորուած , նոր Հայր , մայր , քոյր և եղբայրներ կան Հոս . արդեօք ի՞նչպէս պիտի վարուին իր Հետ : Ահա

digitised by A.R.A.R.@

անոնք ամէնը, հանգերձ մտերիմ ազգականաց հոն են, հարսին ընդ առաջ ելած են, եւ անոր կ'ուղղեն ամէնէն սիրալիր ողջոյնը. „Բարի լո՛յս, աղուո՛ր, բարի լոյս։" Եւ կը շեշտեն անոր իմաստը, կրկնելով, երեքկնելով, չորեքկնելով։ Եւ նորէն նոյն իմաստը երկու ուրիշ ձեւով. „Բարի լուսուն բարին վրադ". „Որ ցաթէ արեւն ի վրադ։" Եւ ապա գերագոյն յարգանքի ու սիրոյ խօսքը կը հնչեցնեն անոր ըսելով. „Թարով եկար դուն բարկ-արա, ցաթեցիր մեր տանն ի վերա։" Դուն մեր տանը ուրախութիւն, զուարթութիւն, կեանք կը բերես իբրեւ արեւ նորածագ։

Հայ ընտանեկան սիրալիր հոգւոյն ամէնէն գողտր ստեղծագործութիւնն է այս տեսարանը, որ բոլորովին իսկատիպ է ու հայկական. ուրիշ ոեւէ ժողովուրդ, քաղաքակիրթ թէ բարբարոս, հարսը այս փառաւոր կերպով, այս բանաստեղծական եղանակաւ ընդունելու սովորութիւնը չունի։

Այս պահուն երգ մ'ալ կ'երգեն յատկապէս տղուն մայրը շնորհաւորելու համար.

15) Թագաւորի մա՛յր, դուն դուրս եկուր.
Քու թագաւոր որդեկդ եկեր է.
Թէք գնացեր, զոյգ եկեր է։

Դուն երգը այս երեք տողերէն կը բաղկանայ, թէպէտ կան նուազ աղուոր տողեր ալ վերջէն յօրինուած, զոր ոմանք կ'երգեն, ոմանք ոչ։

Պատշաճօրէն կ'երգեն նաև նախորդ աւուր քանի մը տողերը — ոլորեցար բոլորեցար, Աղուոր, ճամբան մոլորեցար...

Արարուածը կը վերջանայ սա կերպով։ Թագաւորին հայրը մանր դրամներ կը ցանէ հարսին ու թագաւորին վրայ, և տղաքը կը ժողվեն։ Ապա որդւոյն ճակատը կը համբուրէ ու ձիէն կ'իջեցնէ. և ձիէն կ'իջեցնէ նաև հարսը։ Հարսնեւորք բակէն կը մտնեն տունը։

Ցիշենք թէ Խորենացին Արտաշիսի դիւցազներգութենէն հատակոտոր մը մէջ կը բերէ որ կը ցուցնէ թէ մեր հեթանոսութեան դարերէն շարունակուած է դրամ ցանելու (մարգարիտ, ոսկի, երբ թագաւորն է ամուսնացողը) սովորութիւնը.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան։

Իրաք Ակնայ մէջ դրամ միայն կը ցանեն, մինչ ուրիշ գաւառներու մէջ կորեկ և այլն կը տեղան հարսին վրայ։ (Ամերիկացիք բրինձ կը ցանեն երբեմն։)

Հարսանեաց երկրորդ օրը՝ ուրախութիւնը, խաղն ու ինծիրը գագաթնակէտը կը հասնին։

Հարսը, իր „Հարսնքրոջ" հետ առանձին սենեակ մը կը գրաւեն, ուր թագաւորը կ'երթայ անոնց ընկերանալ մերթ ընդ մերթ և սեղանակցիլ. երկու կողմէն մտերիմ արենակիցներ ալ մուտք ունին հոն։ Ուտող ու խմող բազմութենէն զատ կը հասնի այսպէս հարսը։ Նէ միայն մասնաւոր առիթներով հարսնեւորաց սրահը կ'առաջնորդուի։

Կէս օրէն քիչ վերջ աղջկան կողմէն խնամիներու երկսեռ բազմութիւն մը կու գան շնորհաւորել փեսային կողմը։ Այս առիթով է որ հարսանեկան խրախճանութիւնը իր ծայրագոյն սաստկութեանը կը հասնի։ Գինի կը խմեն, կը պարեն, կը խաղան, և վերջապէս մեծ հացկերոյթը կ'ընեն։

Երկու տեսակ է խաղը. թեւ-խաղ և պար։ Թեւ-խաղ կը նշանակէ դէմ առ դէմ երկու անձանց խաղալը. երբեմն երկու, երեք զոյգեր այսպէս կը կազմուին միահաղոյն, ըստ տարողութեան սրահին։ Կիները, հարսները աւելի կը շարժեն իրենց բազուկները խաղալու ատեն, իսկ այր մարդիկ թէ՛ բազուկներու և թէ՛ սրունքներու շարժումները աւելի եռանդով կը կատարեն։ Կան զարմանալի անհատներ, անհաւատալի տոկունութեամբ մարդեր, որք երկու, երեք ժամ շարունակ կը խաղան, ընդմիջելով միայն գինւոյ բաժակը պարպելու համար, կամ ուրիշ ընկեր մը իրենց դէմ եղած տեսնելու։ Հայկական հարսանեաց մէջ տաւուլ զուռնայ չեն գործածուիր, այլ քէմէչէ, տափ, սանթուր (տեսակ մը տաւիղ՝ մետաղէ թելերով), և սաղ։ Խաղի երգերը Հայերէն և տաճկերէն են։ Մանաւանդ այս աւուր ուրախութեանց մէջ է որ շատ մը տաճկերէն երգեր կ'երգուին — „Ալա կէօզլէրի" և „Մանի" կոչուած երգերը մանաւանդ, որ Ակնայ են սիրական երգերն են, վասն զի սիրոյ և պանդխտութեան երգերն են անոնք։

Պարը Ակնայ մէջ սա կերպ է. կայ պարագլուխ մը (Հալայ-պաշի) որ մէկ ձեռքը թաշկինակ մը կը բռնէ կը տատանէ և միւս ձեռքի

digitised by A.R.A.R.@

ձկոյթովը կը կցուի իրեն քովի պարընկերին ձկոյթին, այսպէս ամբողջ շարքը, ուր կը մըտնեն այրեր ու կիներ խառն։ Եթէ ամառ է եղանակը, տանիքը վրան կը կազմեն և հոն կ'ընեն խրախճանութիւնն ու պարերը։ Պարի երկար շարքը խաղալով կը դառնայ և կը դառնայ բոլորակ կամ ձուաձև շրջան յօրինելով։ Անգամ մը հարսն ու փեսան ալ պարին մէջ կը մտնեն. եթէ փեսան պարագլուխ ըլլայ, թաշկինակի փոխան իր սուրը կը տատանեցնէ։ Այս առիթով բարեկամներէ ոմանք հարսին ճակատը ոսկեդրամ կը փակցնեն ի նուէր։ Հարսը շնորհաւորելու աղուոր կերպ մ'է այս։

Երբ թագաւորը գինի խմէ, բոլոր հարսնեւորը ահագին շռինդ կը հանեն, պատուհաններու փեղկերը, գաւաթները, պատառաքաղները իրարու զարնելով. այս աղմուկը լեցուն վայրկեան մը կը տեւէ ամէն անգամ։ Այս ցոյցը միայն թագաւորին կ'ընեն։ Այս է ծափահարութեան և կեցցէի աղաղակներու տեղը բռնող հին հայկական սովորոյթը։

Երեկոյին երբ աղջկան կողմէն եկած հարսնեւորները մեկնելու կը պատրաստուին, մերմագոյնները կու գան հարսին սենեակը՝ ճաս բարով ըսելու։ Այս ալ սրտայոյզ տեսարան մ'է։ Արտասանդուժի կարօտ անձը մայրն է, և անոր կ'ուղղեն նուագածուք յանուն աղջկան, սա տողերը.

(16) Մի՛ լար, մայրի՛կ, մի՛ լար,
Ես նորէն տի գամ.
Ասկի տասնմիհեզ or
Երկոսս տի գամ։

Ու մայրը աւելի՛ կու լայ։

Ամէնը կ'երթան, բայց „Հարսնքոյր"ը կը մնայ հարսին պահապան հրեշտակը, մխիթարիչը և ընկերը։

Հարսանեաց երրորդ օրը

Այս երրորդ օրը հարսանիքը կը սահմանափակուի տղուն կողմը, զի աղջկան կողմը երկրորդ օրը բարեկամք մեկնած են և ամէն ինչ վերջացած է։ Տղուն կողմը կը շարունակէ խաղալ խնդալ, ուտել խմել մինչև երեկոյ, երբ բարեկամք մեծ մասամբ կը մեկնին։

Չորրորդ օրը, որ է չորեքշաբթի, առաւօտեան ճաշէն վերջը հարսին „պսակը վար կ'առնէ" քահանան, և „Հարսնքոյր"ը որ աղջկան ազգականաց վերջին ներկայացուցիչն է, կը մեկնի։ Հարսանեկան շռինդը լռած է բոլորովին. տունը հանգարտ է, այր մարդիկը գործի կ'երթան։

Չորեքշաբթի գիշեր առաջին անգամ ըլլալով՝ նորապսակ ամուլքն կ'առանձնան միասին իրենց առագաստի սենեակին մէջ։ Անոնք այր և կին հռչակուելէ վերջ՝ երեք օր տեսակցած են ի ներկայութեան „Հարսնքրոջ" կամ կնքամօր, իբրև նախապատրաստութիւն մտերմական ու ներքին կենակցութեան։ Նկատելով մանաւանդ աղջկանց մատաղ հասակը, որ ընդհանրապէս 14-15 տարեկան կ'ամուսնացնեն, մեր նախնիք զգացած են թէ տղուն և աղջկան միջև մտերմական կենակցութիւնը բարբարիկ հանգամանք մը պիտի ունենար եթէ յանկարծ, իբրև ոստիւնով մը սկսէր։ Երեք օրեայ շարունակ տեսակցութեան շնորհիւ նորապսակները չափով մը կ'ընտելանան իրարու։

Հարսանիքը այսպէս կը վերջանայ, բայց նորապսակներուն համար կեանքի ամենէն անուշ և անմոռանալի տարին կը սկսի, զի անոնք տարուոյն գրեթէ կէսը ուրախութեան և խնջոյքի մէջ կ'անցընեն։ Շաբաթ մը վերջը, յետ հարսանեաց, այն է յաջորդ կիրակին, աղջկան ազգականք խմբովին կ'այցելեն իրենց նոր խնամիներուն և „երեւան կը հանեն" աղջիկը, որ կը ներկայանայ և կը հմբուրէ ձեռքերնին և կ'ընդունի ոսկի ընծաներ նորէն։ Այս ոսկիները „երեւան հանողչէք" կը կոչուին։

Հարս ու փեսայ ամիսը անգամ մը կը հրաւիրուին աղջկան մարոնցմէ, ուր կը մնան շաբաթ մը։ Ցուն կը դառնան, և հաղիւ շաբաթ մը կը մնան և ահա երկու խնամիներուն մերձաւոր ազգականներէն մին կամ միւսը կը հրաւիրէ զիրենք։ Հրաւէր կու գայ մօրքրոջմէն, հօրքրոջմէն, մեծ մարոնցմէն, քեռկալէն. ենենս։ Ամէնուն ալ կ'երթան և իւրաքանչիւր տուն կը մնան քանի մը օր։ Երբ տարիներ անցնին և քանի մը զաւակներ ծնին, այն ատեն հրաւէրները աւելի ցանցառ կ'ըլլան և աւելի քիչ օրեր կը մնան հիւր։

Արդիացում Հայկական Հարսանիքին

Նկարագրեցի թէ ինչպէս կ'ըլլայ Հայկա-

digitised by A.R.A.R.@

կան Հարսանիքը. այժմ տեսնենք թէ ինչպէս պէտք է ըլլայ ան այսուհետև։

Էական գծերը պիտի պահենք, բայց կան գծեր ջնջելի և կան ևս որ պէտք է աւելցնենք որպէս զի Հարսանիքը արդի յառաջդիմական ըմբռնումներուն համապատասխանէ։ Այս փոփոխումներով մեր Հարսանիքը աւելի աղուոր կ'ըլլայ առանց Հայկական ըլլալէ դադրելու.

Ա) Պէտք է դուրս ձգել վերջին ժամանակներու գործ եղող անշնորհ երգերն, ինչպէս թիւ 3էն մինչև 8։

Բ) Պէտք է եղանակները զանազան ընել, երգերէն ոմանց նոր ու աղուոր եղանակներ պատշաճեցնելով։ Այժմ բոլոր Հայերէն կտորները երեք եղանակ միայն ունին. մէկը „Բարի լոյս, աղուո՛ր, բարի լոյս"ին եղանակը, շատ պարզ, աղուոր, բնիկ Հայկական, որ տիրապետող է, և բոլոր ուրթ վանկով տողերը այդ միևնոյն եղանակաւ կ'երգուին — թիւ 1, 3, 9, 10, 12, 14, 15։ Եւ որովհետև իւրաքանչիւր տող կը կրկնուի, դիւրին է երեւակայել ահաւոր և նոր ժամանակիս Համար անհանդուրժելի միօրինակութիւնը որ ադէկ կը ծագի։ Կարծեմ թէ այդ երգը (բարի լոյս, աղուոր, բարի լոյս) միայն պէտք է երգել, տողերուն աւանդական կրկնութեամբը, իր ծանօթ եղանակաւը, իսկ բոլոր միւսներուն պէտք է յարմարցնել կամ ստեղծել տարբեր եղանակներ։

Երկրորդ եղանակը 11 վանկով տողերուն եղանակ է (5—6)։ Այս եղանակաւ կ'երգուին զոր օրինակ.

„Եկուր, աղուոր աղջիկ, Հարս եղար մեզի"ն և „Մի՛ լար, մարիկ, մի՛ լար, ես նորէն տի գամ"ը։

Այս եղանակաւը կ'երգեն տաճկերէն կտորներ ալ, և կրնայ ըլլալ որ եղանակը շատ հին կամ բնիկ Հայկական չէ։ Ցամենայն դէպս երաժշտական մանաւոր արժէք մը չունի։

Թ. 13րդ երգը, „Ա՛յ իմ Հարսի դստրիկ"ը անտունի է, այսինքն միւս երգերուն պէս (որք 3 ական տողէ բաղկացած տուներ կը կազմեն) տուներու բաժնուած չէ, այլ իբրև մէկ ամբողջ կը շարունակուի ծայրէ ծայր։ Եղանակը քաշ է, դաշն ու մեղմ, և երգիչը դափ կը զարնէ նոյն ատեն շատ մեղմով, մանր մանր մատի արագ Հարուածներ տալով։ Անտարակոյս այս ալ հին Հայկական եղանակ մ'է և յարգելի։

Գ) Պէտք է որ Հարսին անունով երգ մը երգուի, ի պատասխան այն փառաւոր „Բարի լոյս"ին որով ինքը կ'ողջունուի երբ առաջին անգամ կը մտնէ իր նոր ընտանիքի շրջանը՝ պակէն անմիջապէս յետոյ։ Հիմա աղջիկները 18–20–25 տարեկան կ'ամուսնանան, զարգացած են և աւելի Համարձակ, ուստի գերազանցապէս պատշաճ է որ մեներգող երաժիշտ մը յանուն Հարսին պատասխանէ զինքը ողջունող ընտանիքին։ Իրաւ փորձ ես յօրինած եմ Հետեւեալը, որուն տողերը կրնան պակսիլ կամ աւելնալ ըստ պարագային.

(17) Բարի լո՛յս, հայրի՛կ, բարի լո՛յս.
Բարի լո՛յս, մայրի՛կ, բարի լո՛յս.
Բարի լո՛յս, ազնիւ կնքահա՛յր,
Բարի լո՛յս, կնքամա՛յր անուշ։
Բարի լո՛յս, սիրուն եղբայրնե՛ր.
Բարի լո՛յս, քոյրե՛ր անուշիկ։

Կարելի է այս ալ „Բարի լոյս, աղուոր, բարի լոյս"ին եղանակովն երգել, երկու անգամ կրկնելով, բայց ոչ չորս անգամ։ Մինչ երաժիշտը կ'երգէ, Հարսը պէտք է կարգով մօտենայ պարոնտատին, կեսրոջը, և Համբուրէ անոնց ձեռքը, և յետոյ դառնայ առ կնքաՀայրն, առ կնքամայրն, առ տագերտաքն, առ տալբրտաքն ևն. և խոնարՀի անոնց ամենաշնորՀալի կերպով, ի Հարկէ անոնք ալ իրենց կարգին ոտքի ելլելով իրեն պիտի խոնարՀին ի պատասխան իր ողջոյնին։ Հարսը Հոգ պիտի տանի միա՛ն որ չշփոթի, և իր խոնարՀութիւնը առ իւրաքանչիւր ոք կամ խումբ ընէ ճիշդ երբ երաժիշտը կ'երգէ պատկանեալ տողը։

Դ) Հարկաւոր է յայտագիր մը յօրինել իւրաքանչիւր Հարսանիքի Համար, ինչպէս կը յօրինենք ամէն Հանդիսի Համար, և այլևայլ արարուածներն կարգադրել ըստ պարագայից։ Այժմ, նոյն իսկ ունեւոր ընտանիքներ Հազիւ երբեք պիտի ուզեին երեք օր Հարսանիք ընել։ Շատ վայելուչ կ'ըլլայ այժմ երկու աւուր կամ երկու Հանդէսի վերածել Հարսանիքը. նախ զգեստաւորման Հանդէս. երկրորդ, պակի և խրախճանութեան Հանդէս։ Ահաւասիկ փորձ մը Հարսանեկան յայտագրի որ ինչ ինչ եղանկաւորութիւններով կրնայ Հեշտիւ յարմարցուիլ ամէն Հարսանիքի։

digitised by A.R.A.R.@

Ցայտագիր արդիացեալ Հայկական Հարսանեաց

Առաջին օր.

Այս է փեսային ու հարսին զգեստաւորման օրը։ Այս հանդէսները աւելի ընտանեկան են քան հրապարակային։

Նախ, փեսային զգեստաւորումը տեղի կ'ունենայ իր հօրը տունը, աղջկան կողմէն ալ խումբ մը հարսնեւորներ հրաւիրուած ըլլալով։

Ա. Երաժշտութիւն կ'ըլլայ, և պատշաճ երգեր կրնան երգուիլ՝ իբրև բացումն հանդիսին։

Բ. Փեսան կնքահօր հետ սրահը կը մտնէ հագած ըլլալով երկար մուշտակ կամ վերարկու, բայց առանց բաճկոնի և թիկնոցի։ Կրնայ այս վայրկենիս „Հալաւ"ի օրհնութիւնը տեղի ունենալ, եթէ որոշուած է կատարել այդ կրօնական արարողութիւնը։ Ապա կնքահայրը, և ի բացակայութեան անոր՝ հայրը, կը սկսի զգեցընել փեսան։ Արդէն նկարագրուած կերպով բաճկոնը փեսային շուրջ երեք անգամ դարձընելէ և „Աստուած շնորհաւոր անէ" գուչէլէ վերջ կը հագցնէ. Հանդիսականք կը մասնակցին երրորդ „Շնորհաւորն Աստո՛ւած անէ"ին։ Նոյնպէս։ և թիկնոցը, սուրը, ժամացոյցը, թերեւս նաև գլխարկը ոմանք ուզեն այս կերպով գործածել։

Ապա կ'երգեն Թ. 1 երգը, „Ելիր, կայնէ՛, թագաւոր աղբար"։ Եւ յետոյ շնորհաւորութիւն ներ կ'ըլլան "Աստուած կատարն հասցնէ", — „Ցառասը ...ին գլուխն ըլլայ", կ'ըսեն բարեկամք փեսային և իրարու։

Ուրիշ երգեր կ'երգուին, մեծարանքներ կ'ըլլան և հանդէսը կը վերջանայ։

Ենթադրելով որ այս հանդէսը առաւօտուն տեղի ունեցած է, կէս օրէն յետոյ կամ երեկոյին կը կատարուի երկրորդ հանդէսը, այն է հարսին զգեստաւորումը, իր ծնողաց տանը մէջ։ Այս աւելի երկար ու մեծ հանդէս մըն է, իրաք, ծանրութեան կեդրոնը դեռ աղջկան տունն է, ինչպէս որ պսակէն վերջ պիտի ըլլայ տղուն տունը։

Փեսան և ընտանիքը, հանդերձ մտերմագոյն բարեկամաց խմբակով, կը հրաւիրուին և կ'երթան այս հանդիսին, որ կը կատարուի երկսեռ բազմութեան ներկայութեան։ Հանդէսը ընտանեկան, մտերմական հանգամանք ունի։

Ա. Հանդէսը կը բացուի երաժշտական պատշաճ կտորով մը կամ ճառով։

Բ. Տղուն սիրահարութիւնը նկարագրող երգ մը կ'երգուի, զոր օր. „Հայրիկ, ըսաւ տղան, իր բժիշկ տատին"ը։

(18) « Հայրի՛կ », ըսաւ տղան իր բժիշկ տատին,
Սիրտս խիստ կը տրտիէ, վախեմ նիւանդ եմ։
— Նեռ մը, որդեա՛կ, նեռ մը սիրդ մխուած է.
Երոսի նեռն է այն, չէ՞ ըսած երբէք։
— Բնաւ երբէք, հայրի՛կ, ի՞նչ պիտի ըլլամ,
Ի՞նչ է անունը, ա՜ն, իմ նիւանդութեան։
— (Սաթինիկ)տանարուի՛ւն. տաս լուրջ վիճակ է.
Մինչեւ կեանքիդ վերջը այն պիտի տեւէ։
— Հայրի՛կ, անգամ մըն ալ տրեկնս զննէ,
Բայց զգոյշ եղիր որ նեռը դուրս չելլէ։

Այս երգը որուն տողերը երկու անգամէ կը բաղկանան (6-5) յօրինուած է Ակնայ հանրածանօթ և շատ սիրուած „ալա կէօզլէրի" կոչուած եղանակովը երգելու համար։

Գ. Ապա կ'երգուի հետեւեալը որ հարսընցուին մնաալուա ժամանումին կ'ակնարկէ։

(19) Ջրի՛կ, ո՞ր ակնէն կու գաս,
Իմ պա՛ղ, անուշի՛կ ջրի՛կ.
Գիտեմ սիրու տէր ես դուն.
Ի տար ափարն կու գնաս։
Գիտեռն ի ռուն չես լինիր,
Կ'երթաս որ սիրուդ հասնիս։

(Վազէ. վազէ, տաս վազէ,
Ծարդդ կ'այրի կարօտով.
Այս որ լսեց ջրիկը,
Կարկաչելով բաղդրաձայն՝
Վազեց հասաւ տաս տուռով
Կարօտակէզ եարին հով։)

Փակագծի մէջ առնուած տողերն ես յօրինած եմ աղուոր քերթուածին ամբողջութիւն տալու և զայն հարսանեկան ներկայ պարագային պատշաճեցնելու համար։ „Մայր Արաքսի"ի եղանակը բաւական կը յարմարի այս տողերուն։

Այս բոլոր միջոցին հարսը ներկայ չէ հանդիսին, այլ կը պատրաստուի առանձին սենեակի մը մէջ։ Եւ ահա յանուն փեսային մեներգող մը բարձրաձայն կ'երգէ հետեւեալ տողերը, զորս յօրինած եմ (6-5) Ակնայ հռչակաւոր „մէնի" եղանակով երգուելու համար։

(20) Ցածցէ՛ք, ցածցէ՛ք, լեռնե՛ր, բացուեցէ՛ք ծովեր,
Սիրուս համբայ տուէ՛ք որ տաս ինձ հասնի.
Որչափ ալ տաս հասնի, դարձեալ կ'ուտանայ.
Օրը տարի եղեր, գիշերս դարեր։

„Մէնի"ն սրտերը թունդ հանող և զգայուն

digitised by A.R.A.R.@

հոգիները յարտասուս չարժող եղանակ մըն է զոր կ'արժէ ձայնագրել։

Երգին վերջին տողը հազիւ լմնցած, հարսը սրահը կը մտնէ հարսնքորոջ ընկերակցութեամբ, և մինչ անոնք նազելաձեմ կը քալեն, պէտք է երգուի թ. 9 երգը (Ալբրեցար, բոլբրեցար)։

Հարսը կը նստի իր մոր առջև, ցած աթոռի մը վրայ, երեսը մօրը դարձուցած և անոր ապաստանած ըլլալու դիրքն առած (արմուկը կը կրթնցնէ մօրը գլխին և ձեռքը երեսին կը դնէ։)

Այս դիրքին մէջ է հարսը երբ թ. 10 երգը կ'երգուի (Ազուո՛ր, քեզ որ մայրն է բերեր։)

Յետոյ երեք տիկիններ, փեսային ազգականներէն հետզհետէ կը փորձեն հարսն առնել, և վերջապէս կնքամայրը կը յաջողի և կը հագուեցնէ հարսին (գօտին) գլխարկն և կը նուիրէ անոր ծաղկեփունջ մը, ինչպէս արդէն նկարագրած եմ։

Այն ատեն թ. 11 երգը, „Եկուր, աղուոր աղջիկ, հարս եղար մեզի"ն կ'երգեն մեծ եռանդով։

Ասոր կը հետեւին շնորհաւորութիւններ, և մեծարանքներ, զանազան երգեր, և այսպէս կ'աւարտի հանդէսը։

Երկրորդ օր

Որոշուած պահուն հարսն ու փեսան եկեղեցի կ'երթան հրաւիրեալ բարեկամաց ներկայութեան պսակուելու։ Անկէ կ'երթան կա՛մ փեսային տունը կամ այն սրահը որ հանդիսին համար պատրաստուած կ'ըլլայ։

Երբ հարսն ու փեսան հարսին տունը կամ սրահը իրենց մուտքը պիտի ընեն, նուագածուներէն և երգիչ խմբէ առաջնորդուած, և առաջին երգը պիտի ըլլայ „Առաւօտ լուսոյ"։ Այդ երգին ընտրելագոյն համարները մինչ կը հնչեն, հարսնեւորք, հարս և փեսայ իրենց յարմար տեղերը կը կանգնին ոտքի վրայ, մեծ շրջանակ մը ձեւացնելով, հարսն ու փեսան կեդրոնը գրաւած ըլլալով, հարսնքորոջ և կնքահօր մտիկ կեցած։

Հարսը ահա տղան բերուած է ուրեմն և թ. 14 երգը, հարսանեաց մեծ երգը, մեծ խանդավառութեամբ կ'երգեն, երաժիշտներուն հետ փոխ ի փոխ, մասնակցութեամբ փեսայի բոլոր ազգականներուն, եթէ կարելի է։

Ասոր պիտի յաջորդէ հարսին կողմանէ ողջոյնը թ. 17 (Բարի լոյս, Հայրի՛կ, բարի լոյս)

Այս միջոցին բաղմութիւնը ոտքի վրայ պիտի մնայ։

Ցաւարտ հարսին խոնարհութիւններուն, պարոնտան և ապա կեսուրն, և այլ փափաքողք մանր արծաթ դրամ կը ցանեն հարսին վրայ։

Եւ այն ատեն ամէն ոք կը նստի, և կը սկսի հանդիսին երկրորդ մասը։

Նախ բաժակաճառեր կ'արտասանուին հարսին ու փեսային կենացը, և երկու երգասաններուն կենացը։

Առաջին բաժակաճառը արտասանել անկ է փեսային մօրը (կամ մեծ մօրը՝ եթէ ներկայ է)։ Նէ գինիի գաւաթն ի ձեռին՝ կ'անուանէ հարսը, փեսան, և իւրաքանչիւրին կ'ընէ մաղթանքներ. „Միապակի ծերանաս, մէկ ձէրն ու հազար տերեւէն լինիս, երկանարև լինիս" ևն։ Եւ հարսն ու փեսան այս օրհնութիւններն լսելու ատեն կը մօտենան ու կը համբուրեն մայրիկին ձեռքը։ Ապա խօսքը կ'ուղղէ փեսային պզտիկ եղբայրը որ կու գայ մայրիկին ձեռքը համբուրել. „տառօսը գլուխդ լինի, Աստուած շնորհք տայ" ևն. կ'ըսէ մայրիկը օրհնելով զայն։ Ըստ պատշաճի կունայ ուրիշ շատերու օրհնութեան և շնորհաւորութեան խօսքեր ուղղել, և անոնք, իրենց տարիքին համեմատ, կամ կու գան ձեռքը պագնել կամ ոտքի ելլելով հեռուէն խոնարհութիւն կ'ընեն։ Այս բաժակաճառը կունայ 10-15 վայրկեան տեւել։ Հանդիսին է՛ն գեղեցիկ տեսարաններէն մէկն է (1)։

Ապա կը կարդացուին շնորհաւորական հեռագիրները։ Կրնան նաև ցուցադրուիլ հարսին տրուած ընծաները։ Մեծարանքներ կ'ըլլան, թեթև կամ կատարեալ ընթրիք կը տրուի. պար

(1) Իմ որդւոյս հայկական հարսանիքին, որ Նիւ Եորք կատարուեցաւ եւ ներկայ էին Ամերիկացիներ ալ, ամենէն շատ օտարներուն ազդող միջադէպն էր այն բաժակաճառը զոր մայրս արտասանեց իբրեւ Հայաստանէն եկած մեծ մայր։ Ամերիկացի տիկիններ յուզուած եւ հիացած արտասուեցին ի տես այն խորին յարգանքին եւ ձեռք պագնելու ուրացին կերպին որով բազմաթիւ զաւակներ եւ հարսներ կը պատասխանէին իւրաքանչիւրն իրեն պատկանած օրհնութեան։

digitised by A.R.A.R.@

կ'ըլլայ, և երբեմն մինչև կէս գիշեր խարհանութիւնը կրնայ շարունակուիլ։

Հայկական հարսանիքը կրնայ բիւր մանր եղանակաւորութիւններ կրել, սակայն անոր էական գծերը, գերազանցօրէն գեղեցիկ, պէտք է պահպանուին յաւիտեան։

Մեր ցեղին ամենաթանկ ժառանգութիւններէն մէկն է Հայկական հարսանիքը. ճանչնա՞նք անոր արժէքը և միշտ ընենք մեր հարսանիքները հայկական։

Նիւ-Եորք Տօք. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐԱԶՈՒԹԻՒՆԸ

ԷՋՄԻԱԾՆԱԳ քաղաքացուն միաբան և իմ սիրելի բարեկամ Հ. Գարեգին վարդապետ Յովսէփեանի գրած այս տոքիւմանը, զոր՝ իր մէկ փոքրիկ յօդուածին հետ կը հրատարակեմ ստորև, Էջմիածնայ մէջ այժմ մնացած նկարներուն թուականը դէթ մասամբ ճշդելու կը նպաստէ. ասիկա իմ ձեռքս հասաւ երբ արդէն "Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը" գրքիս տպագրութիւնը վերջացած էր, որով չկրցայ օգտուիլ։

Յովնաթանի գործին վրայ ուսումնասիրութեանս մէջ՝ ես այն կարծիքն յայտնած էի թէ ինչ որ ապահովապէս Յովնաթանի (և իր աշակերտներուն) գործն է, որմնազարդերն են ու որմնանկարները, և աւագ սեղանի մարմարէ ճակտին վրայ նկարուած Աստուածածնայ և սրբոց նկարները։ Իսկ իւղաներկ նկարները, ուր ոճի ու ձեռքի մեծ տարբերութիւններ կը զգացուին, և որոնք անշուշտ միևնոյն անձի և միևնոյն շրջանի գործեր չեն, ճշդել թէ որո՞նք են անոնց մէջ Յովնաթանին պատկանողները, դժուար գտած էի. հաւանական համարած էի որ իտալական ոճի ազդեցութիւն ցոյց տուող նկարները անորը չըլլան, այլ թերեւս՝ Ստեփաննոս վարդապետ Լեհացւոյն. Թագակիր Ս. Աստուածածինը, Ընթրիքը, Ս. Հռիփսիմէն, Ս. Թադէոսը, Ս. Բարթուղիմէոսը և նմանօրինակ մէկ քանի նկարները, որոնք քիչ մը հին ձեւագրի մանրանկարներ կը յիշեցնեն՝ եւրոպական ազդեցութեամբ խառն, տեղի հնարաւոր նկատած էի Յովնաթանին վերագրուելու։ Այժմ, այս տոքիւմանը կուգայ որոշապէս ապացուցանել թէ իմ հատորիս մէջ վերարտադրուած նկարներէն ոմանք չեն կրնար Յովնաթանին վերագրուիլ, քանի որ արդէն գոյութիւն ունէին Սիմէոն կաթողիկոսին օրով. ատոնցմէ են՝ Աւետարեր հրեշտակը և Աստուածածնայ Ս. Մարիամը, Ս. Հռիփսիմէն, Ս. Ընթրիքը, Թագակիր Ս. Աստուածածինը (Ս. Կարապետ և Ս. Յովսէփ երկու քովը), տասներկու առաքեալները (որոնցմէ չորսին լուսանկարը հրատարակած էի) Մկրտութիւնը, Յարութիւնը։

Նկարիչ Յովնաթանին գործէն քանի մը նմուշ հրատարակելով հատորիս մէջ և իրեն նուիրելով հակիրճ ուսումնասիրութիւն մը՝ իմ նպատակս եղած էր՝ ինչպէս գրած էի՝ ուշադրութիւն հրաւիրել մեր մեծ սրբավայրերուն մէջ գտնուած գեղարուեստական առարկաներուն ու մասնաւորապէս նկարներուն վրայ, ու նոյն ատեն փափաք յայտնած էի որ մասնագէտներ աւելի՛ մօտանց և աւելի մանրակրկիտ կերպով քննեն Էջմիածնայ մէջ գտնուած նկարները, ատոնց մէջ Յովնաթանին իսկական բաժինը հաստատապէս որոշեն, գտնեն միւսներուն ալ ժամանակն ու հեղինակները։ Այս տոքիւմանը արդէն կարևոր քայլ մը առնել կուտայ մեզ այս ճամբուն մէջ։ Ուրախ եմ որ Հ. Գարեգին մատղիր է շարունակել իր խուզարկութիւնները, քննութեան ենթարկել բոլոր նկարները և ամբողջական մանրաղննին ուսումնասիրութիւն մը պատրաստել։ « Անահտ »ի ընթերցողները անշուշտ մեծ հետաքրքրութեամբ պիտի սպասեն այդ ուսումնասիրութեան։

Ա. Զ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ Աբգար ամսագրի 1901 թիւ Մարտ և Մայիս ու Յունիս միացեալ համարներում՝ հրատարակեցինք Հայրապետական Գաւազանագրքի մի ընդարձակ հատուած, որ վերաբերում էր Մայր Տաճարի՝ Ղուկաս կաթուղիկոսի ժամանակ և Յովնաթան նկարչի ձեռքով կատարուած՝ պատկերագրութեան և զարդանկարչութեան։ Հեղինակը, ականատես և գործին տեղեակ մի անձնաւորութիւն,

digitised by A.R.A.R.@